

ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՔԱԶՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌՒԱՔԵԼԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ Եկեղեցու Առաքելական ավանդության մասին հիմնական սկզբնաղբյուրներն են Վ դարի պարամիչներին երկերը, հատկապես՝ Մովսես Խորենացու «Պարմութիւն Հայոց»-ը, ինչպես նաև «Կանոնագիրք Հայոց»-ը և «Կնիք հաւարոյ»-ն: Եկեղեցու ավանդության մասին հստակ գիտական և աստվածաբանական ձևակերպումներ են փրված հայրախոսական երկերում: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Դ Կալեցին (Շնորհալին, կթղ. 1166-1173 թթ.) «Հայ Եկեղեցու ավանդության» ակունքների մասին գրում է. «Առ մեզ միայն հաստատելու և անհրաժեշտ է ի Սրբոյն Գրիգորի»: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատորյակում «Եկեղեցու ավանդության»-ը հերկյալ ձևակերպումն է փրված. «Վարդապետութիւն կամ խորհուրդ հաւարոյ, եւ ուսմունք Եկեղեցոյ»¹:

Ներկայումս ստվարաձավալ գրականություն գոյություն ունի Հայ Եկեղեցու ավանդության շուրջ՝ կապված Ազաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու երկերի բնագրային և պարամիչական հեղինակությունների հետ: Հայտնի է նաև իրար հակադրվող, նույնիսկ իրարամերժ կարծիքներ, որոնցում քննարկվում են պարմական հավաստիության, ավանդություն լինելու (ըստ միջավայրի՝ հայկական, ասորական, հունական) և պարմականության սկզբունքների հիմնահարցերը:

Հավարքի, ավանդության և գիտության մասին խոսելիս պետք է հիշել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա Նովսեփյանի (կթղ. 1943-1952 թթ.) արտահայտած խորիմաստ մտքերը: Հավարքի մասին նա գրել է. «Հաւարոյ աշխարհն է բարձրագոյն գաղափարականի եւ բարոյական գեղեցկութեան աշխարհը, որ հակադրութիւնն է եւի, շահախընդրութեան, բռնակալութեան եւ փառամոլութեան աշխարհի»²: «Գիտություն և Եկեղեցի» հոդվածում Գարեգին Նովսեփյանը կրոնի ու գիտության մասին գրել է. «Իսկական գիտութիւնը հեղինակութեամբ է միմիայն ճշմարտութեան, իսկ ճշմարտութիւնը ազատութիւն (Յովհ. Ը 32) եւ զօրութիւն է փայլի մարդուն... Պարմութեան ընթացքը գիտութեան եւ Եկեղեցու սերտ դաշնակցութիւնն է... Եկեղեցու համարեայ բոլոր մեծ պաշտօնեաները իրենց անձի մէջ կրօնականի հետ միացրել են եւ գիտութեան փարբերը... Աստուածաբանութիւնը իր էութեամբ պարմական գիտութիւն է, որովհետեւ նորա ուսումնասիրութեան նիւթը պարմական փոնակներն են, այսինքն՝ քրիստոնէական կրօնը իր էութեամբ, ծագմամբ, զարգացմամբ եւ ներկայ վիճակով... Պարմութիւնը մարդկային հոգու գիտակցութիւնն է ընդհանրապէս, իսկ կրօնը՝ նորա ամենախորին խորհուրդը... Քրիստոնէական կրօնի եւ Եկեղե-

¹ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, Վենետիկ, 1836, Երևան, 1979, էջ 390:

² «Հայաստանայց Եկեղեցի», օգոստոս, 1940:

ցու մասին մեր գիտակցությունը սրող պարամական գիտությունը աստիճանաբար մտնում է... Եկեղեցական հոգևոր զենքը գիտությունն է...»³:

Գարեգին Ա Կաթողիկոս Նովսեփյանը Սրբազան Ավանդության և գիտության մասին էլ ասում է. «Ներկայ եկեղեցականներս շար բանով երախտապարար ենք մեր նախորդներին: Նոքա, մինչև իսկ ներկայ մարքով գիտություն չունենալով հանդերձ, իրենց հաապարմութեամբ, առանդապահութեամբ, նախանձախնդրութեամբ պահպանել են նախնեաց թողած ամենամեծ ժառանգությունը, բայց այսօր անհրաժեշտություն է դարձել, որ նախայիշեալ յարկությունների վերայ աւելանայ եւ գիտութեան ոգին: *Ասակողմանիք երկար ժամանակ պահպանում է սրբազան ժառանգությունները, բայց առանց գիտությունը կենդանացնող միջոցների ևս աղօտանում է և կորցնում իր գործությունը*»⁴:

Եկեղեցու ավանդության նշանակության գիտական, աստվածաբանական և գրական քննարկումների հարցը չի ժխտվել և մեծ տեղ է գրավել անվանի հայագետների՝ պարամաբանների, բանասերների, գրականագետների հետազոտություններում, քանզի այն նաև գիտական խնդիրների ոլորտին է պատկանում:

Նայ Եկեղեցու հայրապետությունը հիմնվեց Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների կողմից, ուստի Նայոց Եկեղեցին անկախ, ինքնուրույն և ինքնագլուխ Եկեղեցի է: Նայ Եկեղեցու Աթոռը առաքելական է, այն եպիսկոպոսապետական հաջորդականությամբ հասել է մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչ, որը կարելի է համարել Աստուծո կողմից փրված մի պարզ: Այս միտքը համահունչ է հայ միջնադարյան պարամագրության ոգուն և առավել ցայտուն դրսևորվել է Մովսես Խորենացու «Պարմություն Նայոց»-ում, քանզի Պարմահայրը մինչ իր ժամանակները հասած Նայոց ամբողջական պարմության հոգևոր առանցքը հերկյալ բնորոշմամբ է ներկայացրել. Ս. Գրիգոր Լուսավորիչ «ի ճերություն պարարություն հոգևորի զմեզ ժողովեաց ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ»⁵: Պարմահոր այս միտքը կարելի է համարել հայ պարմագիտական և աստվածաբանական գոհարներից մեկը:

³ «Արարար», օգոստոս-սեպտեմբեր, 1900:

⁴ Գարեգին Ա Կաթողիկոս. Ղ.պի Լոյս և Կեանք, Երևան, 1994, էջ 30, 97-103:

⁵ Մովսես Խորենացի, Պարմություն Նայոց, Երևան, 1991, Գիրք Բ, գլ. ՂԱ, էջ 245: